**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**(12.02.2025 թ. – 31.03.2025 թ. ժամանակահատված)**

**ԱՍՀՆ հավասար հնարավորությունների ապահովման վարչության տարեցների հիմնահարցերի բաժնի փորձագետ Սոնա Բարսեղյանի**

**Հաշվետվության հասցեատեր**

Հաշվետվությունը կներկայացվի հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետի տեղակալ Արթուր Կեսոյանին

**Հաշվետվության նպատակ**

Այս հաշվետվությունը նպատակ ունի ներկայացնելու իմ՝ որպես հավասար հնարավորությունների ապահովման վարչության տարեցների հիմնահարցերի բաժնի փորձագետի կատարած աշխատանքները:

**Հաշվետվության կառուցվածք**

Աղյուսակի տեսքով ներկայացնում եմ իմ կողմից արված աշխատանքները.

| Հ/Հ | | | |
|---|---|---|---|
| 1. | Գրանցման համար Մ/10664-2025 Գրանցման ամսաթիվ 2025-03-06 | ՀՍԿՈՂԱԿԱՆ/ՄԱԿ ԳԱ 80-րդ նստաշրջանի ընթացքում զեկույց ներկայացվելու նպատակով՝ տարեց մարդկանց իրավունքների հարցերով ՄԱԿ անկախ փորձագետի հարցաշարը՝ համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու համար | Գրանցման համար Ն//3851-2025 Գրանցման ամսաթիվ 2025-03-18 |
| 2. | Գրանցման համար Ն/ԱՀ-1-1/2416-2025 Գրանցման ամսաթիվ 2025-02-20 | ՆԱԽ./ՀԱՄԱԿԱՐԳ ՀՍԿՈՂԱԿԱՆ/Վ/Ո/47-Ա/«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ/«Սոցիալական դեպքի վարման, տնային կամ գտնվելու վայր այցելություն կատարելու մեթոդական ուղեցույցները հաստատելու մասին» ՀՀ ԱՍՀ նախարարի հրաման ընդունելու մասին/47-Ա ՀԱՎԵԼՎԱԾ ԿԵՏ 2 | Գրանցման համար Ն//3582-2025 Գրանցման ամսաթիվ 2025-03-12 |
| 3. | Գրանցման համար Մ/2690-2025 Գրանցման ամսաթիվ 2025-01-21 | ՆԱԽ./ՀԱՄԱԿԱՐԳ ՀՍԿՈՂԱԿԱՆ/Վ/Ո/47-Ա/«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ/«Նախնական, համալիր, հրատապ, առանձնահատուկ կարիքների գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԱՍՀ նախարարի | Գրանցման համար Ն//3994-2025 Գրանցման ամսաթիվ 2025-03-20 |

| | | | |
|---|---|---|---|
| | | հրաման ընդունելու մասին/47-Ա ՀԱՎԵԼՎԱԾ ԿԵՏ 3 | |
| 4. | Գրանցման համար Ժ/[7633]-2025 Գրանցման ամսաթիվ 2025-03-18 | ՆԱԽ./ՀՍԿՈՂԱԿԱՆ/ Ք / ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին մեր ՆՄ/ԳԽ/36802-2024 գրությամբ ներկայացված վարչապետի որոշման նախագիծը՝ Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչության ու քաղաքացիական ծառայության գրասենյակի եզրակացությունները քննարկելու համար/02/09.10/43196-2024 | Գրանցման համար Ն/ԱԿ-5-2/4240-2025 Գրանցման ամսաթիվ 2025-03-26 |
| 5. | Գրանցման համար Մ/8314-2025 Գրանցման ամսաթիվ 2025-02-20 | Ներկայացվում է «Կամք Սոցիալ-բարեգործական» ՀԿ-ի ՍՏՈՐԱԳՐՎԱԾ գրությունը՝ տնային պայմաններում տարեց և/կամ 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող քաղաքացիների խնամքի և սպասարկման կազմակերպման հաստատագրի ստացման վերաբերյալ/1416110 | Գրանցման համար ՎՏԲ//6052-2025 Գրանցման ամսաթիվ 2025-03-06 |
| 6. | Գրանցման համար Ն/ԱԿ-5-1/2539-2025 Գրանցման ամսաթիվ 2025-02-24<br><br>Գրանցման համար Մ/8981-2025 Գրանցման ամսաթիվ 2025-02-25 | «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների միասնական հաստիքացուցակի օրինակելի ձևը և դրա լրացման կարգը, պաշտոնների անձնագրերի օրինակելի ձևերը և կոդերի ցանկը, պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները հաստատելու և 2014 թվականի հունիսի 30-ի ո 81-Ն/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանի նախագիծ | *Սույն գործի շրջանակում իրականացվել է պաշտոնների անձնագրերի լրամշակում, ՊՈԱԿ-ների տնօրենների առաջարկությունների և դիտարկումների հավաքագրում՝ ԱԻ կողմից ներկայացված պաշտոնների գրադացիայի սխեմայի առնչությամբ: Քննարկումների արդյունքում որոշվել է սույն հրամանի նախագիծը հանել շրջանառությունից (լիազորող նորմի բացակայություն) և փոխարենը շրջանառել նոր հրամանի նախագիծ:* |

| | | | |
|---|---|---|---|
| 7. | Գրանցման համար ՆՄ/ԱԿ-5-1/4917-2025 Գրանցման ամսաթիվ 2025-02-25 | ՆԱԽ./ՀՍԿՈՂԱԿԱՆ/Կ/Ո/1674-Լ/ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1978-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ/Հոգեբուժական հաստատություններում և տուն- ինտերնատներում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ ներդնելու, ինչպես նաև արձանագրելու ձևաթուղթ և ուղեցույց մշակելու ու այդ ձևաթուղթն իրավապահ մարմիններին ներկայացնելու հստակ ընթացակարգ սահմանելու մասին/1674-Լ ՀԱՎԵԼՎԱԾ 2 ԿԵՏ 2.3 | *Սույն գործի առնչությամբ Ս/13270-2025 (2025-03-24) և Ս/15427-2025 (2025-04-03) գրություններով ստացված եզրակացությունների վերլուծում, անհրաժեշտ փոփոխությունների կատարում և հրամանի նախագծի լրամշակում: Քննարկումների արդյունքում որոշվել է լիազարող նորմի բացակայության հետևանքով 2-րդ հավելվածը հանել հրամանի նախագծից և նորմատիվ իրավական ակտից անցում կատարել անհատականի: Մինչև ֆիզիկական ուժի և զսպման միջոցների գործադրման ընթացակարգը հաստատելու մասին հրամանի նախագծի շրջանառման համար լիազորող նորմի ապահովման նպատակով «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ իրականացնելը, որպես միջանկյալ լուծում, որոշվել է 2-րդ հավելվածին վերաբերող կարգավորումները ներառել ՊՈԱԿ-ների ներքին կանոնակարգերում, որոնք էլ այդ նպատակով* |

| | | | |
|---|---|---|---|
| | | | *հավաքագրվել են ուսումնասիրման համար:* |
| 8. | 14.03.2025 ә. | Հանդիպում-քննարկում նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանի և Վորլդ Վիժնի ներկայացուցիչների մասնակցությամբ:<br>Քննարկման առարկա՝ Վորլդ Վիժնի երեք նոր ծրագիր<br>1. ՌԱՅՁ ծրագիրը՝ ուղղված տեղահանվածների սոցիալական վերականգնմանն ու ինտեգրմանը:<br>2. Հզոր երեխայի պաշտպանությունը խթանող հզոր քաղաքացիական հասարակություն /ֆինանսավորում է BMZ-ը/<br>3. Տեղահանված և մարգինալացված բնակչության համար սոցիալ-հոգեբանական ծառայությունների բարելավում / ֆինանսավորում է GIZ-ը/ | *Այս առնչությամբ հավաքագրվել է անհրաժեշտ տեղեկատվություն և վերապատրաստում անցնելու նպատակով տրամադրվել է հոգեբանների և սոցիալական աշխատողների ցուցակ:* |
| 9. | 24.03.2025 թ. | Քննարկում նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանի մոտ՝ փորձագետներ Դավիթ Թումասյանի և Վարսեր Կարապետյանի մասնակցությամբ:<br>Քննարկման առարկա՝ ՀՀ վարչապետի 20.01.2025 թ. 47-Ա որոշման հավելվածի *կետ 16* «Սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության հավաստագրման կարգը, պայմանները, հավաստագրի կասեցման, ինչպես նաև հավաստագրված անձանց ռեեստրի վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, *կետ 18* «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգերից և պայմաններից բխող ընթացակարգերը և օրինակելի ձևերը հաստատելու մասին» ԱՍՀՆ հրաման և *կետ 20* «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող խնամքի տրամադրման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ԱՍՀՆ հրաման | *Ուսումնասիրվել են խնդրին առնչվող 2007 թ-ից մինչ օրս առկա հչամանները և ՀՀ կառավարության որոշումները, հավաքագրվել և ուսումնասիրվել են տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա և ցերեկային խնամքի կազմակերպություններից ստացված ձևաթղթերը, որոնք կիրառվում են շահառուի հետ աշխատանքի տարբեր փուլերում* |

| | | | |
|---|---|---|---|
| 10. | 28.03.2025 թ. | Հանդիպում-քննարկում «Աջակցություն Հայաստանի տարեցներին Միություն» (AAAA, Associazione Assistenze Anziani Armenia) ասոցիացիայի ղեկավարներ Ռիկարդո Բոսկետտիի և Դոմինիկ Բոսկետտիի հետ: Հանդիպմանը մասնակցել են նաև՝<br>Այգաբաց վարչական շրջանի ղեկավար Սասուն Վանեցյանը<br>Ծրագրի խորհրդատու, ՀՀ սոցիալական աշխատողների ասոցիացիայի անդամ Աշխեն Տոնոյանը<br>Հանդիպման նպատակ՝ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայությունների ներդրում ՇՄ Ախուրյան համայնքում: | *Հանդիպման ընթացքում ներկայացվել են սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը, հավաստագրման համար պարտադիր պայմանները, տնային պայմաններում խնամքի ծառայությունների տրամադրման չափորոշիչները, ինչպեն նաև մասնագետների հասփիքային միավորների չափորոշիչները: Տեղեղատվություն է տրամադրվել դաշտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ, ի մասնավորի՝ խորհուրդ է տրվել ծանոթանալ ՀՀ կառավարության 10 նոյեմբերի 2022 թ. N 1744-N և 10 սեպտեմբերի 2015 թ.N 1078-Ն որոշումների դրույթներին* |
| 11. | Այլ գերատեսչություններից և կազմակերպություններից ստացված գրություններին ի պատասխան դիտարկումների և առաջարկությունների ներկայացում | | *10* |

14.04.2025 р.